ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/210

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9967-2022 գրությամբ «Էլար գոլդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 25.05.2022թ. թիվ Ե/13/1158-22 գրության հիման վրա, 31.05.2022թ. թիվ 26/26-1/9967-2022 գրությամբ նախաձեռնել է «Էլար գոլդ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Էլար գոլդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էլար գոլդ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Էլար գոլդ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/210 ընթացակարգի շրջանակներում 03.06.2022թ. ժամը 12:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.05.2022թ. թիվ Ե/13/1158-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար «բեռնատար մոտոցիկլ» ապրանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ԷԼԱՐ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի (ООО "ЭЛАР голд") միջև, 2022թ. փետրվարի 15-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-36/21-1 պայմանագիրը՝ 2039400 (երկու միլիոն երեսունինը հազար չորս հարյուր) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) ընդհանուր գնով, որը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծվել է՝ պայմանագրի 2.1.7 կետի համաձայն:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա. պարբերության և ՀՀ Կառավարության 526-Ն Որոշման 45-րդ կետի պահանջներով, Ձեզ ենք ներկայացնում մասնակցի տվյալները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/210 ընթացակարգի շրջանակներում 03.06.2022թ. ժամը 12:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/210 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/210 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Էլար գոլդ» ՍՊԸ-ի միջև 15.02.2022թ. կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-36/21-1» ծածկագրով «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար բեռնատար մոտոցիկլի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը

պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված փականը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

2. Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ մատակարարվող ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված և 2021 թվականի արտադրության:

3. Պատվիրատուն «Էլար գոլդ» ՍՊԸ-ին ուղղված 23.05.2022թ. թիվ Ե/13/1134-22 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար «բեռնատար մոտոցիկլ» ապրանքի ձեռքբերման նպատակով 2021թ. դեկտեմբերի 29-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-36/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ԷԼԱՐ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի միջև 2022թ. փետրվարի 15-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-36/21-1 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ 2039400 (երկու միլիոն երեսունինը հազար չորս հարյուր) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) ընդհանուր գնով: Համաձայն պայմանագրի հավելված No 1-ի (Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց) բեռնատար մոտոցիկլի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը կնքելուց հետո 90 օրացուցային օր՝ մինչև 15.02.2022թ.:

Ձեր ընկերության կողմից սույն թվականի փետրվարի 18-ին մատակարարվել է բեռնատար մոտոցիկլ (հարկային-հաշիվ Ա N 3 առ 18.02.2022թ):

Ապրանքի ստուգման արդյունքում (Ակտ 03.22-032 առ 14.03.2022թ.) հայտնաբերվել և արձանագրվել է, որ մատակարարված բեռնատար մոտոցիկլը չի համապատասխանում պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին և հետ է վերադարձվել Ձեզ:

Միաժամանակ Ձեզ առաջարկվել է թույլատրելի ժամկետում փոխարինել մատակարարված ապրանքը պայմանագրի պահանջներին համապատասխանող բեռնատար մոտոցիկլով:

Պայմանագրով նախատեսված բեռնատար մոտոցիկլը «ԷԼԱՐ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի կողմից չի մատակարարվել:

4. Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն պայմանագրի 2.1.7 կետի համաձայն միակողմանի լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ԷԼԱՐ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի միջև 2022թ. փետրվարի 15-ին կնքված թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-36/21-1 պայմանագիրը: Հայտնում ենք նաև, որ Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն Որոշմանբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 45-րդ կետի պահանջները»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 24.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9967-2022 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 25.05.2022թ. թիվ E/13/1158-22 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Էլար գոլդ» ՍՊԸ-ի միջև 15.02.2022թ. կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-36/21-1» ծածկագրով «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար բեռնատար մոտոցիկլի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված փականը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ մատակարարվող ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված և 2021 թվականի արտադրության:

Պատվիրատուն «Էլար գոլդ» ՍՊԸ-ին ուղղված 23.05.2022թ. թիվ Ե/13/1134-22 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար «բեռնատար մոտոցիկլ» ապրանքի ձեռքբերման նպատակով 2021թ. դեկտեմբերի 29-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-36/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ԷԼԱՐ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի միջև 2022թ. փետրվարի 15-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-36/21-1 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ 2039400 (երկու միլիոն երեսունինը հազար չորս հարյուր) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) ընդհանուր գնով: Համաձայն պայմանագրի հավելված No 1-ի (Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց) բեռնատար մոտոցիկլի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը կնքելուց հետո 90 օրացուցային օր՝ մինչև 15.02.2022թ.:

Ձեր ընկերության կողմից սույն թվականի փետրվարի 18-ին մատակարարվել է բեռնատար մոտոցիկլ (հարկային-հաշիվ Ա N 3 առ 18.02.2022թ):

Ապրանքի ստուգման արդյունքում (Ակտ 03.22-032 առ 14.03.2022թ.) հայտնաբերվել և արձանագրվել է, որ մատակարարված բեռնատար մոտոցիկլը չի համապատասխանում պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին և հետ է վերադարձվել Ձեզ:

Միաժամանակ Ձեզ առաջարկվել է թույլատրելի ժամկետում փոխարինել մատակարարված ապրանքը պայմանագրի պահանջներին համապատասխանող բեռնատար մոտոցիկլով:

Պայմանագրով նախատեսված բեռնատար մոտոցիկլը «ԷԼԱՐ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի կողմից չի մատակարարվել:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն պայմանագրի 2.1.7 կետի համաձայն միակողմանի լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ԷԼԱՐ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի միջև 2022թ. փետրվարի 15-ին կնքված թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-36/21-1 պայմանագիրը: Հայտնում ենք նաև, որ Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն Որոշմանբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 45-րդ կետի պահանջները»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 24.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է***

<u>պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա)մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրացուցային օրից ավելի,

Պայմանագրի 2.2.4 ենթակետի համաձայն՝ գնորդը պարտավոր է ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

Պայմանագրի 5.3 ենթակետի համաձայն՝ եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 108-րդ կետի համաձայն՝ Պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: ***<u>Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության</u>***

(այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Կարգի 109-րդ կետի համաձայն՝ արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: Սույն կետում նշված անձը պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում են պայմանագրի պայմաններին: Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետների խախտման դեպքերում տրվում է դրական եզրակացություն, եթե պատվիրատուի կողմից չի ընդունվում պայմանագիրը լուծելու մասին որոշում: ***Բացասական եզրակացություն տալու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր հայտնում է պատվիրատուի ղեկավարին՝ ներկայացնելով առաջարկություններ պայմանագրի կողմի նկատմամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ***: Նման դեպքում պատվիրատուի ղեկավարը ներկայացված առաջարկություններին համապատասխան ձեռնարկում է միջոցներ՝ հարցի կարգավորման համար: ՀՀ պաշտպանության նախարարության պատվերներով իրականացվող տեղական արտադրության ռազմական նշանակության ապրանքի և (կամ) գույքի համար, որոնց ընդունումը (նախատեսված է) իրականացվել է պատվիրատուի ներկայացուցչության միջոցով, արձանագրության ստորագրման համար հիմք է ընդունվում ներկայացուցչության կողմից այդ ապրանքի և (կամ) գույքի համար տրված դրական եզրակացությունը:

Կարգի 110-րդ կետի համաձայն՝ Էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

1) պայմանագրի կամ դրա մի մասի ընդունման նպատակով պայմանագիր կնքած անձը դրանով սահմանված ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: ***Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման***

<u>արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը</u>.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանման՝ ***<u>գնման հայտը նախագծած ներկայացուցիչն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին է տրամադրում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն</u>***.

3) ***<u>եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է՝</u>***

<u>բ. բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին:</u>

Կարգի 111-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 109-րդ կետով նախատեսված գրավոր եզրակացության ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Այսպիսով՝ վերը շարադրված իրավական կարգավորումների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ***Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ,*** այնուհետև Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը, ***որից հետո պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցիչը տրամադրում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն և եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների***

համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին, մինչդեռ՝ Պատվիրատուի կողմից տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վերը նշված փաստաթղթերը, այն է՝ հանձնման-ընդունման արձանագրությունը առկա չէ, իսկ դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը կազմված չէ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի կողմից սահմանված ձևին համապատասխան, ինչպես նաև առկա չէ պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտը (Հավելված 3.1), ուստի՝ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Էլար գոլդ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի 2.1.7.1 կետի ա) ենթակետի խախտման փաստը և, որպես վերը նշվածի հետևանք, Պայմանագրի միակողմանի լուծման իրավաչափությունը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Էլար գոլդ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված՝ Պայմանագրով ստանձնած պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9967-2022 գրությամբ «Էլար գոլդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**